Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հրատարակութիւն Գ. Գալուստեանի

№ 25

ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ДИРШСКАЯ ЦЕРКОВНО-ПРИХОДСКАЯ
АРМЯНСКАЯ ШКОЛА.

ԳԻՔՈՐԸ

(տրատարակած «Հառկեր» ամսագրից)

ԹԻՖԼԻՍ
Եր.ֆտրատարած տպարան «ՀԵՐՄԷԱ», Ըճկ., Մարար. փող., № 5.
1907 թ. (251)

21.995
-95

Հրատարակութիւն Գ. Գալաստեանի
2011-05
№ 25
891.99 Մ.
Թ-95
14/3
Ար
1001/1635

Յով. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԳԻՔՈՐԸ

ԹԻՖԼԻՍ
Էլեֆտրաւարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ., Մադար. փող., № 5.
1907 թ.
(229)

2 3 APR 2013

8870

ԳԻՔՈՐԸ

1

Գիւղացի Համբօի տունը կռիւ էր ընկել։

Համբօն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տայ, որ մարդ դառնայ, աշխատանք անի։ Կինը չէր համաձայնում։

—Չեմ ուզում, իմ քօրփա երէխին էն քեաֆուր աշխարքը մի գցիլ, չեմ ուզում,—լալիս էր կինը։

Բայց Համբօն չը լսեց։

Մի խաղաղ, գեղեցիկ առաւօտ էր. մի տխուր առաւօտ։ Տանըցիք ու հարևանները եկան մինչև գիւղի ծայրը, Գիքորի թշերը պաչեցին ու ճամփա դրին։

Քոյրը, Զանին լաց էր լինում, իսկ փոքրիկ Գալօն մօր գրկից ձայն էր տալի — «Գիքո՛ր, էտ ո՞ւր ես գնում, հէ՞ Գիքո՛ր»։

Գիքորը շուտ շուտ ետ էր նայում։ Տեսնում էր դեռ գիւղի ծայրին կանգնած են նրանք ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը։ Դարձեալ հօր կողքով վազում կամ առաջն էր ընկնում։ Մին էլ ետ նայեց. գիւղը ծածկւել էր բլուրի ետև։

Այնուհետև Գիքորը ետ էր ընկնում։

—Արի հա՛, Գիքոր ջան, արի հա՛, հասանք հա՛,—որդուն կանչելով գնում էր Համբօն, շալակին մի խուրջին, մէջը մի քանի հաց ու պանիր ու մի երկու դաստա ֆուրթուն։

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, միանգամ էլ երևաց գիւղը հեռու մշուշում։

—Ա՛յ, ապի, մեր տունն էն ա հա՛,—ցոյց տաւ Գիքորը՝ մատը մեկնելով դէպի գիւղը, թէև տունը իսկի չէր երևում, ու անցան։

Առաջին իրիկունը գոնախ ընկան մի գիւղում։ Տանտէրը Համբօի հին ծանօթն էր։

Դեղին սամօվարը թշշում էր տախտի ծէրին։ Մի ջահել աղջիկ շրրխկշրրխկացնելով բաժակները լւանում ու թէյ էր շինում։ Նա սի կարմիր սիրուն շոր ունէր հագին։ Գիքորն էնտեղ մտքումը դրեց, որ երբ քաղարում փող աշխատի, իրենց Զանի համար մի էնտեսակ շոր դարկի։

Իրիկնահացից ետը տանտէրն ու Համբոն թինկը տուած, չիբուխ քաշելով զրոյց էին անում։ Խօսեցին Գիքորի մասին։ Տանտէրը գովեց Համբոին, որ չարչարւում էր որդուն մարդ շինի։ Յետոյ սկսեցին խօսել կուի վրայ, հացի թանգութեան վրա, բայց Գիքորը շատ էր յոգնած, քունը տարաւ։

Միւս օրը բաղաք մտան։ Գնացին ծերունի Թաւլաչու մօտ։ Առաւօտը բաղարն իջան։

—Բիձա, էդ երեխին ծառայ ես տալու,—խանութի ներսից հարցրեց մի վաճառական։

—Հրամանք ես,—ասաւ Համբոն ու Գիքորին էն կողմը հրեց.

—Բեր ինձ տուր, ես կը բեռնեմ,—առաջարկեց վաճառականը։

Նրան ասում էին բաղաղ Արտեմ։

2

Համբոն բաղաքում Գիքորին ծառայ տաւ բաղաղ Արտեմի տանը։ Պայմանն էն էր, որ Գիքորը պէտք է տունը մաքրէր, ամանները լուանար, ոտնամանները սրբէր, դուքանը բաժին տանէր, ու էս տեսակ մանր ծառայութիւններ, մինչև մի տարի։

Մի տարուց ետը բաղաղը նոր-բան պէտք է տանէր դուքան, շինէր դուքանի «աշակերտ», ու Լսպէս Գիքորը պէտք է բարձրանար։

—Հինգ տարի դեռ փող չեմ տալ,— ասաւ բաղաղը պայմանը կապելիս։—Թէ դրուստը կուզես, դեռ դու պէտք է տաս, որ քու որդին բան է սովորելու։ Ախար իսկի բան չըգիտի...

—Որտեղից գիտենայ, խաղէյին ջան,—պատասխանեց Համբոն,—որ գիտենար, էլ ուր կըբերէի, Ես էլ բերել եմ, որ բան սովորի...

—Կըսովորի, ամեն բան կըսովորի։ Էնպէս սովորի որ... ձեր կողմերից էն Նիկոլն ինչ է, որ իրեն համար դուքան ունի բաց արած, նա էլ ինձ մօտ է մարդ դառել։ Ամա վերջում մի ջուխտ չայի գդալ ու մի քանի բան գողացաւ...

—Չէ, խաղէյին ջան, սա գողանալ չի։ Որ էդպէս բան անի, կը գամ կըռնիցը կը բռնեմ էն Քուռը կը գցեմ։

—Հա, որ ձեռը հալալ է՝ մարդ կը դառնայ։

—Իմ դարդն էլ էն ա, աղա ջան, որ մարդ դառնայ, լեզու սովորի, գրել-կարդալ սովորի, նստել-վերկենալ սովորի, մարդ ճանաչի, որ աշխարքումն ինձ նման խեղճ ու զուրկ չը մնայ... Ինքն էլ աչքաբաց երեխայ ա, մեր գեղական շկոլումն էլ գրաճանանչ ա էլել, գրի սեն ու սիպտակը ջոկում ա։ Ամա աղաչանքս էն ա, որ լաւ մրտիկ անէք, դարիր երեխայ ա, բօրիա ա...

Բաղաղը Համբոին միամտացրեց ու դուրս գնաց բարձր ձայնով հրամայելով՝—«Ձայ բերեք, հաց բերեք սրանց համար...»

—

Ու հայը ու որդի նստած էին բաղաղ Արտեմի խոհանոցում։

—Դէ, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղայ ես դուրս գալի... Հէնց պէտք է անես, որ... ես ինչ գիտեմ... ով Տէր Աստած...—մռնչաց Համբոն ու չիբուխը լցրեց։

Այն ինչ Գիքորը շորս կողմն էր դիտում։

—Ապի, սրանք բուխարի չունեն։

—Չէ, սրանցը փէչն ա, այ էն ա փէչը...

—Կալ էլ չունեն։

—Սրանք բաղարացի են, գեղացի հօ չեն, որ կալ կասեն։

—Բա որտեղից են հաց ուտում։

—Փողով առնում են ուտում։ Հացն էլ են փողով առնում, եղն էլ, կաթն էլ, մածունն էլ, փէտն էլ, ջուրն էլ...

—Վա...

—Բա, սրան Թիֆլիզ կասեն։ Դու հալա զոչաղ կաց, դեռ շատ բան կիմանաս։

Ապի, սրանք ժամ ունեն...

—Ունեն բաս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնեայ են։ Մրտիկ արա հա—ձեռնարաշութիւն չանես։ Կարելի ա քեզ փորձելու համար փող վեր կը գցեն, մօտենաս ոչ։ Թէ վերցնես էլ, տար ասա—«խանում էս ինչ փող ա, էստեղ վեր ընկած էր,աղա, էս բանն էստեղ գտայ,» Թէ չէ...

—Էստեղ էլ պրիստաւ կայ որ...

—Կայ բաս... Վախտ ու անվախտ դէս դէն չընկնես, ձեռդ ընկած փողը քօռ ու փուչ չանես, հազար ու մի պակասութիւն ունենք։ Քեզ էլ լաւ պահի, գիշերները բաց չըլես, մրսես ոչ... Մի մին եկողի հետ գիր գարկի...—մերթ մերթ չիբուխը բերանից հանելով որդուն խրատում էր Համբոն։ Այնինչ Գիքորը ննջում էր։

—Հացի կտորտանքն ու քարթուն կը տան, կերակուրի թերմացքը կը տան, շատ անգամ էլ իրենք կուտեն, քեզ տալ չեն, բան չը կայ ծառայի կարդն էդ ա... Օրեր են, կը մթնեն անց կը կենան...

Շարունակում էր հայրն իր խրատը, բայց Գիքորը հօրը թինկը տուած քնել էր արդէն։

Էն երկու օրը նա էնքան բան էր տեսել, էս ու էն կողմը նայել, որ յոգնել էր բոլորովին։

Մրքով լիքը խանութները, դէզերի նման դարսած գոյնզգոյն չթերը, տեսակ—տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող երեխաների խմբերը, իրար ետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանանչի բարձած աւանակները, թաբախները գլխներին կինտոները... էս ամենի զոռոցն ու զնզոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնւած ղժվըժում էր նրա գլխում։ Եւ նա յոգնել էր ու հօրը թինկը տուած քնել։

—

Էս ժամանակ բաղաղն ու իր կինը վիճում էին ներսը։ Կինը տրտնջում էր, որ ծառան խամ էր,

Գիքորը շուտ շուտ ետ էր նայում...

նոր սարիցն եկած, վայրենի, իսկ մարդն ուրախ էր, որ մի քանի տարով անվարձ ծառայ էր գտել։

—Կը սովորի, հօ էդպէս չի մնալ,— ասում էր նա կնոջը։

—Կը սովորի, որդի, սիրտդ շուտ մի բերիլ,—խնդրում էր բազազի պառաւ մայրը։

Բայց տիկին Նատօն չէր համոզւում։ Նա արտասուելով անիծում էր իր բախտը։

3.

Գիքորը մնում Նատած էր բազազ Արտեմի խոհանոցում։ Նա արդէն ծառայութեան մէջ էր։

Խազէյինի հին գլխարկը մինչև ականջները կոխած գլուխը, հին ոտնամանները ոտներին, մի մաւի բլուզ էլ հագին, էսպէս ոտից գլուխ փոխուած, նա նստած էր խոհանոցում ու միտք էր անում։ Մտքէր էր անում, թէ ինչի եկաւ իրենց գիւղից, որտեղ է ընկել, հիմի ինչ պէտք է անի, ինչպես պէտք է անի...

Էս ժամանակ ներս մտաւ տիկին Նատօն։

Գիքորը տեղը նստած էր։

Տիկինը մի բան ասաւ։ Գիքորը լաւ չը լսեց, թէ չը հասկացաւ։

—Քեզ չեմ ասում, տօ արջի բոթոթ։

Գիքորը շփոթուեց, քրտնեց. մին ուզեց հարցնի թէ ինչ է ասում, մին էլ սիրտ չարաւ։ Աղջիկ պարոնը բարկացած դուրս գնաց։

—Ը՛հ, հոգեմ ձեր գլուխը, որ վայրենի էր ու գալիս էր մարդի գլխի խաթա դառնում... Ես բան եմ ասում, նա տեղիցն էլ ժաժ չի գալի, մի ձէն էլ չի հանում...

—Վերջացաւ,—անցաւ Գիքորի մտքովը։—Բայց ինչ շուտ վերջացաւ... ինչ վատ վերջացաւ... Հիմի ես ինչ անեմ... էլրս էլ գնաց...

Եւ ամեն բան նա վերջացած էր համարում, երբ իրեն իրեն խօսելով ներս մտաւ սև շորերով բաբի պառաւը, բազազի մայրը։

—Որ աղջիկ պարոնը ներս է գալի, տեղիցդ ինչի չես կանգնում, որդի,—խրատում էր նա Գիքորին,—որ բան են հարցնում ձէն հանի... ոնց կելի էդպէս...

«Դէդին» սովորեցնում էր Գիքորին թէ ինչ պէտք է անի, ինչպէս սամովարը դցի, ոտնամանները սրբի, չօռակը բռնի, ամանները լուանայ...

Բացի պառաւ «դէդին», ամենը նեղացնում էին նրան։

Բազազի «դուքնի աշակերտներն» էլ շարունակ ծաղրում էին նրան, «քիքի» էին կանչում, քիթը բաշում, գլխին խփում, գլխարկը կոխում ականջները։

Բայց էս բոլորը տանելի բաներ էին։

Անտանելին էն էր, որ նա չէր կարողանում բազցին դիմանալ։ Նա իրենց տանը, երբ սովում էր, գնում էր տաշտիցը հաց էր առնում, կճուճից պանիր էր հանում, ուտելով գնում խաղալու կամ թէ չէ փէշն էր գնում, գնում հանդը։ Երբ ուզում էր մի ծառի տակի կամ աղբիւրի վրա նստում էր ուտում։

Հիմի էստեղ ուրիշ տեսակ էր։ Ինչքան էլ սոված լինէր՝ պէտք է սպասէր մինչև ճաշի ժամանակը դար, էն էլ ամենք ուտէին, եւոյ ինքը։ Էդ անիծած ժամանակն էլ էնքան ուշ էր գալիս, որ խեղճի սիրտը քամ էր ընկնում, թրթռում։

Մին, երկու, տասը համբերելուց ետը նա սկսեց շորս կողմն աչք ածել խոհանոցում, թէ արդեօք մի բան չի գտնել ուտելու, որ սիրտը կանգնեցնի, մինչև ճաշի ժամանակը դայ։

Սկզբում ինչ գտնում էր—շոր հացի փշրանք, կրծած ոսկոր թէ ուրիշ բան, գցում էր բերանը։ Մի քիչ յետոյ մտածեց խոհանոցի պահարանները որոնել։ Ապա թէ սովորեց կերակուրի պղնձից կիսեփ մսի կտոր դուրս քաշել...

Բայց եթէ նկատէին...

Ինչ վատ բան դուրս կը գար,

Եթէ նկատէին...

Հապա ինչ անել...

Թողնել, փախչել...

Եւ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին։

Բայց ոնց փախչես, որ կողմը փախչես. մենակ, ճամփա չըգիտես, մարդ չես ճանաչում... իսկ հաչը...

Չէ որ նա էնքան չարչարուեց, խօսեց, խրատեց. «օրեր են, որդի, կը մթնեն, անց կը կենան...»

Եւ ահա Գիքորի գլխում հնչում է հօր խանձուած ձայնը,—«Օրեր են, կը մթնեն, անց կը կենան... անց կը կենան...»

4

Զանգը տւին։

Գիքորին ասել էին թէ երբ զանգը տալիս են, գնա տեսնի՝ ով կայ, ինչ է ուզում։ Նա դուրս եկաւ, պատշգամբից նայեց, տեսաւ՝ մի պարոն ու մի քանի տիկին դռան առաջը կանգնած։

—Էդ ո՞վ էք, հէյ,—ձայն տւաւ վերևից։

Ներքևից վերև նայեցին։

Տիկիններբ ծիծաղեցին, իսկ պարոնը ակնոցներն ուղղելով հարցրեց։

—Աղջիկ պարոնը տա՞նն է։

—Ի՞նչ էք անում,—հարցրեց Գիքորը։

Ներքև ծիծաղն աւելի սաստկացաւ։

—Քեզ հարցնում են՝ տանն է, թէ չէ, բարկացաւ պարոնը։

—Բան ունէ՞ք,

Էս ձայների վրա տիկինը դուրս եկաւ։

—Քրքրւես դու, գնա դուռը բաց արա, շուտ,—ճչաց ու սկսեց անիծել Գիքորին և իր ամուսնուն։ Բայց շուտով հիւրերն երևացին և նա ժպտալով դիմաւորեց։

—Ա՜ բարև, բարև,... Էս ո՞ր խաչին էր, ինչպէս է որ մտաբերեցիք...

—Էս ո՞ր տեղից էք գտել,—ասաց զլուխը Գիքորին չափելով հարցրեց պարոնը, իսկ տիկինները շարունակ ծիծաղում էին։

—Ի՞նչ էք նախանձում, կուզէք ձեզ տանը,—կատակի տւաւ տիկինն ու հիւրերը խնդալով ներս մտան։

Գիքորին շտապով մի տեղ ուղարկեց ու նրանց ետևից իսկոյն ներս մտաւ և տիկին Նատոն։

Իրար առողջութիւն հարցնելուց ետոյ հիւրերն սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմութիւնը, և դուրս եկաւ մի ահագին պատմութիւն։

—Օ՞ֆ, սիրտս մաշել է,—գանգատւում էր տիկին Նատոն.—թէ իմանաք՝ ինչ եմ քաշում ես դրա ձեռից... Ասում եմ՝ դուրս անենք կորչի, բայց դէ Արտեմի բնաւորութիւնը գիտէք էլի, ասում է՝ մեղք է, գեղացի երեխայ է, թող կենայ, մի կտոր հաց է, ուտի, կը սովորի... Ախը էլ ե՞րբ... սիրտս մաշեց...

—Օ՜հ, օ՜հ, օ՜հ, էդ ծառաների բանն էլ մի ասիլ,—էս ու էն կողմից ոկսեցին բողոքել տիկին հիւրերը։

Մի կէս ժամ խօսեցին դէսից դէնից, ծառաներից, քաղաքի նորութիւններից, բայց հէնց էդ ժամանակ ներս մտաւ քրտնած Գիքորը։

—Աղջիկ պարոն, միրզը բերի։

—Հա, լաւ, գնա,—հրամայեց տիկինը կարմրելով, իսկ հիւրերն սկսեցին ծիծաղել։

—Աղջիկ պարոն, խաղէյինն ասում էր՝ բալը թանգ ա, հարկաւոր չի...

Էս խօսքերի վրա հիւրերից ոմանք պորտակացին ու թաշկինակով բերաններին հուպ տւին, ոմանք էլ տանտիկնոջ խայտառակութիւնը ծածկելու համար վկայեցին, թէ իրաւ բալը շատ թանգ է, էս ժամանակին ով է բալն առնում։ Ապա սկսեցին յանդիմանել, թէ ինչ հարկաւոր է միրզը, հօ ուտելու համար չեն եկել, ինչ են նեղութիւն քաշում...

Տանտիկինը մինչև ականջակոթերը կարմրած աշխատում էր մի կերպ եղածն ուղղել։

—Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել էս յիմարը։

—Ով սուտ ասի՝ գետինը մըտնի,—երդւեց Գիքորը, և ամեն բան լրացաւ։

5

Հիւրերին ճամփու դնելուց ետոյ տիկին Նատոն բարկացած, բարձր բարձր խօսելով վեր էր բաղում մրգի սեղանը։ Նա հայհոյում էր Գիքորին, մէկ մէկ թւում էր թէ ինչեր է անում նա, անիծում էր իր բախտը, իր ամուսնուն։

—Քա՛ խամ է, որդի, կը սովորի, որդի... ինչի ես սիրտդ շուռ բերում... Ախ Աստած, ինչի չես հոգիս առնում,—հառաչում էր պառաւ դէդին։

—Երանի մի իմանամ՝ մարդու սրտի էս նեղացած ժամանակը դու ինչ ես խօսում... Խամ է, դէ գնացէք դուք շինեցէք, ես հօ ձեր դերին չեմ,—ձայնն աւելի բարձրացնելով պատասխանեց պառաւին հարսը և շարունակեց իր տրտունջն ու անէծքը, մինչև ամուսինը տուն դարձ։

Ամուսնու ոտնաձայնը որ լսեց՝ սկսեց արտասւել, աւելի բարձր խօսել ու ամանները իրար գլխով տալ։

—Ասում եմ՝ դուրս արա, կորչի. ես ծառայի բանն էլ կանեմ, թէ խնայում ես՝ փող տաս, կարգին ծառայ բռնես... Լաւ է մարդ ծառայի տեղ էլ քաշ դայ, բան թէ ամեն օր էսէնց սիրտը շուռ բերի... Իմ թշնամին հօ չես...

—Ի՞նչ է պատահել,—հարցրեց բաղաղը՝ տսն մէջտեղը կանգնելով։

—Ի՞նչ պէտք է պատահի. էն էր մնացել, որ խալխի մօտ էլ մարդ գետինը մտնի, էն էլ աբիր. էլ ինչ պատահի,—վրա թռաւ տիկինը և պատմեց բալի պատմութիւնը։

—Վա՜հ,—բացականչեց բաղաղը։

—Ա՜խ Աստծ,—հառաչում էր բարի պառաւը՝ դէս ու դէն ընկնելով։

Բաղաղը Գիքորին ձայն տւաւ։

Թմփթմփացնելով Գիքորը ներս ընկաւ։

—Մօտիկ արի,—կանչեց բաղաղը։

Գիքորը վախեց նրա դոյնից, մնաց տեղը կանգնած։

—Քեզ ասում եմ՝ մօտիկ արի...

Գիքորն էս անգամ շարժւեց, բայց դարձեալ մնաց տեղը կանգնած։

—Տօ, արջի բոթոթ, ես քեզ ասում եմ՝ աղջիկ պարոնին ասա, գու գալիս ես զոնախներին ասում թէ բալը թանգ է՞...

—Ես... ես... աղջիկ պարոնին... ուզում էր արդարանալ Գիքորը, բայց խօսքը բերանում՝ ապտակը հասաւ, աչքերը կայծակին տւին, գլուխը դիպաւ կողքի պատովն ու վայը ընկաւ։ Հէնց ընկած տեղն սկսեց բազազը ոտքել, անդադար կրկնելով—«բալը թանդ էր, հ՞ը... բալը թանդ էր, հ՞ը...»

Գառաւ դէզին զողզողալով մէջ ընկաւ, աշխատում էր ետ քաշել կատաղած որդուն, աղջիկ պարոնն էլ եկաւ, երեխաներն էլ սկսեցին ճչալ, բազազը ետ կանգնեց հեալով ու կրկնելով—«բալը թանդ էր, հ՞ը», աչքերը միշտ չռած անկիւնում կծկըւած Գիքորի վրա, որ զողալով ու ցաւագին մրմնջում էր

—Վա՛յ, նանի ջան, վա՛յ... վա՛յ, նանի ջան, վա՛յ...

6.

Տեսան տանը չի կարողանում ծառայել՝ խանութ տարան Գիքորին։ Այնտեղ ապրանք կըտային մուշտարիների հետ տանելու, չիթ կը ծալէր, խանութը կը սրբէր, իսկ պարապ ժամանակը մուշտարի կը կանչէր։

Եւ ահա Գիքորը հաց է տանում խանութը։ Կերակրամանը ձեռքին, մաշած ու ղժգոյն, մեծ մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով։ Նայեց ներքև։ Քարանսարաների բարձր պատերին զարկելով ծառս էր լինում Քուռը, ոլորւում, պտտւում ու ճնշելով խեղդւում, խուլ թշշում կամուրջի տակին։

Ափից մօտիկ պտըտում էր մի կանաչ նաւակ։ Երկու հոգի կային նրա մէջ. մինը ուռկան էր ձգում, միւսը նաւն էր կառավարում։

«Ա՛յ հիմի կը հանի», ասաւ Գիքորն ու կանգնած նայում էր ձկնորսներին։ Ուռկանը դատարկ դուրս եկաւ։

—Էս մինն իմ բախտիցը—ասաւ Գիքորն ուռկանը ձգելիս։ Գիքորի բախտը դատարկ դուրս եկաւ։

—Էս մինն էլ մեր Զաննի բախտիցը։

Էս էլ դատարկ դուրս եկաւ։

—Էս մինն էլ Գալօի բախտիցը։

Գալօն էլ էր անբախտ։

—Էս մինն էլ բաս...

Բայց էտ ժամանակ մօտիկ քարանսարայի դռանը աղմուկ բարձրացաւ։ Մի պարսիկ կապիկ էր պարածում երգելով.

Ա՛յ արի, արի, մէյմուն,
Ճիպոտըդ սարի, մէյմուն,
Գառաւի պէս կուզի կուզ,
Զահելի պէս պարի, մէյմուն։

Ժողովուրդը հաւաքւել էր գըլխին ու վազում էին չորս կողմից։ Գիքորն էլ վազեց։ Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնել, առաջ անցնել, չըկարողացաւ։ Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ճգնում էր անպատճառ տեսնել թէ ինչ է կատարւում մէջ տեղը։

—Ինչ ես ներս խծկւում, տօ լածիրակ, գնա բու բանին,—ասաւ մի կինտօ ու զարկեց Գիքորի գլխին։

Գիքորը յանկարծ սթափւեց ու վազեց դէպի խանութ։

7.

Իրիկունը Գիքորը կուչ էր եկել խոհանոցում։ Դեռ արտասուքը չէր չամաքել նրա երեսին, դեռ այրւում էին խազէյինի ապտակների տեղերը, դեռ նոր էր լռել աղջիկ-պարոնի ձայնը—շշուացընելով ներս մտաւ Վասօն, բազազի աշկերտը։ Գիքորին նկատելով՝ նա իսկոյն կանգ առաւ ու մասխարա դէմքին լրջութիւն տալով սպառնալի հարցրեց.

—Կլուբումն ուշացար, տօ արջի քոթոթ, թէ զուբերնատի մօտ վառզ դործ ունէիր...

Գիքորը գլուխը չէր բարձրացնում։

—Ասա մի տեսնեմ է, տօ...

Գիքորը լուռ էր։

—Ձեռ իմանում, տօ, որտեղ էիր է, որ էսօր ինձ քաղցած սպանեցիր. որ մեռնէի՝ ետոյ...

Էսպէս խօսելով կամաց կամաց մօտեցաւ, մի քիչ կանգնեց ու յանկարծ զարկեց Գիքորի գլխին։ Գիքորը երկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմւեց պատին։ Վասօն պատրաստւում էր մի ուրիշ ձեի հարւած էլ հասցնելու, բայց դուրսը բարձրացաւ խազէյինի ձայնը։ Գալիս էր։

—Աբա տես հիմի բեզ ինչ է անում,—սպառնաց Վասօն։

«Հիմի ինձ կը սպանեն», անցաւ Գիքորի մտքովը, ու խեղճի հոդին տապ արաւ։

Խազէյինը արդէն բաւական ծեծել էր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չըտան, որ իմանայ թէ ինչ բան է քաղցածութիւնը։

Վտանգն անցաւ։

Գիքորը հանգստացաւ, թէև լըսում էր աղջիկ-պարոնի ձայնը, որ ճչում էր.—Ախը ընչի ես պահում, զուրս արա կորչի էլի, զուրս արա կորչի...

8.

Գիքորը կծկւեց վերմակի մէջ, գլուխը կոխեց տակը, տապ արաւ։

«Լուսնեակ գիշեր
բոլորովին քուն չունեմ,
Ինձ տեսնողը
կարծում է թէ տուն չունեմ,
վա՛յ, տուն չունեմ...»,

իր երգը երգելով Վասօն հաց էր ուտում։ Գիքորը վերմակի տակից երբեմն զգոյշ ծիկրակում, թարուն նայում էր նրան կրկին աչքերը ծածկում։ Նա էն օրը հաց չէր դրել բերանը. ծեծել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պառկեց, ու քունը չէր տանում։

—Հ՞ը, ոնց ա, սոված քունըդ չի տանում. հա, էդպէս...—նկատեց չարաճճի Վասօն ու մի կըտոր հաց ու պանիր տւաւ Գիքորին։—Դէ, առ, տեղի տակին թարուն կեր, խազէյինը չիմանայ։

Գիքորը յափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թարուն ուտում էր ու մրտածում։ Մտածում իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ ապատ խաղում էր հանդերում ու լիա-

սիրտ հաց ուտում, մտածում էր էն երեկոների վրա, երբ հէրն ու մէրը կուում էին իրեն բաղաք բերելու համար... իսկ մայրը լաց էր լինում, չէր ուզում...

—Ա՜խ, նանի ջան, ինչ լաւ էր սիրտդ իմացել,—հառաչում էր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրն ուտում ականջը սրած, թէ խազէյինը հօ չի գալի...

Իսկ առաւօտը կանգնած էր խանութի դռանը։...

—

9.

Խանութի դռանը կանգնած ձայն էր տալիս Գիքորը, մուշտարի կանչում ու բարձր ձայնով գովում իրենց ապրանքը։

—Կանչի է, տօ։ ինչ ես մնջւել, մնացել կանգնած։ Բերանումդ հօ ջուր չը կայ։

—Է՛ստի համեցէ, Էստի համեցէր...—կանչում էր Գիքորը։



Է՛ստի համեցէք, Էստի համեցէք...

Ներսը ծիծաղից թուլանում էին նրա վրա։

Նրան սովրեցրել էին, որ մուշտարի քաշի դէպի իրենց խանութը։ Եւ նա յաճախ բռնում էր էս կամ էն անցորդի փէշից, կոպիտ

ու յամառ սկսում էր քաշել դէպի խանութը, և բաց չէր թողնում, մինչև որ մարդը դուրս էր գալիս համբերութիւնից։ Գալիս էր դարձեալ իր տեղը կանգնում ու կանչում։

Ամառւայ տօթ օրերին, խանութի դռանը երկար կանգնելուց յոգնած, նա երբեմն նստած քնում էր խանութի առաջին դարսած չթերի վրա։

Էդ ժամանակ չարաճճի ընկերները կամ հարևանները բռնօթի էին բռնում նրա քթի տակը։

Նա փուշտալով վեր էր թռչում։

Զոզից թմրած վաճառականները զարմանում էին։ Իսկ խազէյինը կուշտ ծիծաղելուց յետոյ ձայն էր տալիս.

—Քնում ես, տօ, արջի քոթոթ, կանչի է...

—Է՛ստի համեցէք, Էստի համեցէք,—ձայն էր տալիս շշշկլած Գիքորը և ներսը ծիծաղն աւելի էր սաստկանում։

10

Մի օր էլ Գիքորը երբ մուշտարի էր կանչում դիմացից երկու գիւղացի դուրս եկան։ Նա վազեց, փաթաթուեց գիւղացիներին։

—Ա՛յ տղայ, իսկի ճանանչեցի ոչ, էս ինչ բան էր,—զարմացած բացականչեց գիւղացիներից մին ու դարձաւ ընկերին։

—Բաղօ, դու կրճանանչէիր...

—Ես աչքերիցը կը ճանանչէի,—պարծեցաւ ընկերը։

Ճշմարիտ, որ Գիքորը շատ էր փոխուել, ատ էր մաշուել։ Ինքն էլ էր փոխուել, շորերն էլ։ Դժար էր ճանանչելը։

—Ա՛յ տղայ, էս կարգին մարդ ա դառել,... հալա սրա շորերին, սրա շնորհին... — հիանում էին գիւղացիները։

—Համբօի հոդը մեր գլխին. տես նա իր տղին օրտեղ հասցրեց, մեր տղերքը էնտեղ խոզ են արածացնում...

Այն ինչ Գիքորը իրար ետևից հարցնում էր.

—Իմ մէրը ո՞նց ա... մեր երեխէքը ո՞նց են... իմ հէրն ընչի՞ չեկաւ... մեր կովը ծնել ա թէ չէ... մեր գեղումն ո՞վ ա մեռել...

—Ամենն էլ լաւ են, շատ բարով կանեն, — պատասխանեցին գիւղացիք։—Էն ա Սուքնանց Ղուկասը մեռաւ, մին էլ Պուճուրանց պառաւը, մնացածը լաւ են։

—Բա իմ հէրն ընչի՞ չի գալիս։

—Քու հէրը լաւ ուզում ա, ամա ո՞նց գայ։ Ինքը մենակ մի մարդ ա, սաղ տան ջափէն վրէն...

—Բա բան չեն դարգե՞լ...

—Ինչ ունեն, որ ինչ դարգեն, դու ձեր տան բանը գի՞տես ոչ։ Էս տարի էլ հացը բարակ էր, խեղճ հէրդ գօրով ծէրը ծէրին ա հասցնում։ Նրանից ի՞նչ ես ուզում։ Թէ ունիս, դու դարգի. հրէն խարջ են ուզում—ձեռին գրօշ չունի։

—Հօ մեր տանիցը ոքմի չի հիւանդացել։

—Չէ, էն ա ձեր Ծաղիկ կովը

Միրզանց գոմի փլեկովը ներքև ընկաւ սատկեց։

—Ծաղիկը սատկեց...

—Խեղճ մէրդ էնքան լաց էլաւ աչքերն ուռան։

Էս ասելով գիւղացիներից մինը մի նամակ հանեց տաւ Գիքորին ու ասաւ.

—Հիմի ի՞նչ ես ասում. մենք էլ քեզ տեսնիլ չենք, գնալու ենք. թէ մօրդ կամ քւորդդ համար բան ես զարգելու, տուր տանենք։

—Ո՞ր տեղից բան զարգեմ, զեռ փող չեմ ստանում... ինա...

—Ամա ի՞նչ...

—Ուզում եմ՝ ես էլ գամ ձեզ հետ։ Համ մեր զեղին, համ մեքանը կարօտել եմ, համ էլ...

—Վա՛յ, վա՛յ, մենք հէնց իմացանք՝ ա՛ դդ ես դառել, խելօքացել ես... էդ տեսակ բան կասէն։ Էստեղ քեզ համար աղավարի ապրում ես—շորերդ թաղա, ոտն ու ձեռդ իստակ... Մենք ասում ենք մեր երեխանցն էլ տեղ անես բերենք, դու էտ ի՞նչ ես ասում։ Էն որ ասել են «խոզի գլուխը զրին խալիչին, գլուխց ետ ցեխն ընկաւ,» հալալ քեզ համար են ասել։

Էսպէս յանդիմանեցին գիւղացիները, խրատեցին, մնաս բարով ասին ու գնացին։

Նրանց գնալուց յետոյ Գիքորը իր անկիւնը քաշւեց ու բաց արաւ հօր նամակը։

«Իմ սիրելի որդի Գիքոր ջան.
'Ի քաղաքն Թիֆլիզ։

«Մենք ողջ և առողջ ենք, միայն քու ողջութիւնն ենք ուզում, ամէն։ Քեզ շատ կարօտով բարով են անում Ապին, Նանը, Զանին, Մօսին, Միկիչը, Գալօն, ամէն։ Մեր սիրելի որդի Գիքոր. ա՛ա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա և խարջը սաստիկ ուզում են և փող չենք ճարում, և Նանն ու Զանին տկլոր են և տեղներս շատ նեղ ա։

«Գիքոր ջան, մի բանի մանէթ փող զարգի և շոր զարգի և մի գիր զարգի քո որպիսութիւնից։ Եւ իմացած ըլես, որ Ծաղիկը սատկեց, և Նանն ու Զանին տրկլոր են։»

Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք էր անում Գիքորը. զարդ էր անում իրենց տան համար։ Սիրտն այրում էին նամակի տողերը։

—Նանն ու Զանին տկլոր են... Տեղներս նեղ ա...

—Կանչի է, տո՛, ի՞նչ ես վերացել, ուշքդ հետները գնաց... — ձայն տվին ներսից։

—Է՛ստի համեցէք, Էստի համեցէք ,կանչում էր Գիքորը խանութի դռանը կանգնած։

11.

Ձմեռը եկաւ։ Սառն ադմուկով ձիւնախառ բուքը թռչում է քաղաքի վրրով։ Փողոցներում սուրում, սուլում, հոսան է անում։ Վզզալով մտնում է անկիւնները, աղբատի ու տկլորի է ման դալիս, պանդուխտ ու անտէր երեխայ է սրսնում։

Ահա գտաւ Գիքորին։

Մի բարակ բլուզ հագին խանութի դռանը կանգնած ձայն էր տալիս նա.

—Է՛ստի համեցէք, Էստի համեցէք...

12

Հիւանդ պառկած էր Գիքորը բազազ Արտեմի խոհանոցում։ Պառաւ դէդին օրը մի քանի անգամ ներս էր մտնում իրեն իրեն խօսելով։

—Ի՞նչ կուզես, որդի Գիքոր։

—Ջուր...



Էտ ի՞նչ ես էլել, Գիքոր ջան...

—Չէս սս...—չարախինդ սուլելով ցուրտը աներևոյթ թրի նման, զարկեց անցաւ ոսկորները, ու Գիքորը դողաց։

Առանց էն էլ նա շատ էր մաշւած. էդքանն էլ հերիք էր նրան։ Ու անկողին ընկաւ։

Դէդին ջուր էր տալի։ Հիւանդը դողդոջուն ձեռներով բռնում, ագահ խմում էր ու կրկին ուզում։

—Էս սիրտս հովացնում չի, դէդի... ես մեր աղբրի սառը ջրիցն եմ ուզում, դէդի... ես մեր տունն եմ դնում... ես իմ Նանին եմ ուզում...

Բազազ Արտէմը Կցաւի մէջ էր ընկել։ Նա դէս դէն ընկաւ, նրանց կողմերից մարդ գտաւ, ապսպրեց, որ Համբօն գայ, իսկ Գիքորին տարաւ քաղաքային հիւանդանոց։

Էնտեղ շատ հիւանդներ կային շարքերով պառկած։ Տխուր տընդում էին ու իրար նայում անզօր հայեացքներով։

Գիքորին էլ պառկեցրին նրանց շարքում։

Էստեղ գտաւ նրան հայրը։

—Էտ ինչ ես էլել, Գիքոր ջան,— մղկտալով վրա ընկաւ Համբօն։

Գիքորը տաքութեան մէջ չիմացաւ հօր գալը։

—Գիքոր ջան, բա եկել եմ է, Գիքոր ջան... ես քու ապին եմ է...

Հիւանդը ոչինչ չը հասկացաւ։ Նա զառանցում էր ու զառանցանքների մէջ կանչում էր— «Միկիչ, Զանի, Ապի, Նանի...»

—Էստեղ եմ, Գիքոր ջան, նանը զարկել ա, որ քեզ տանեմ մեր տունը... գալիս չես... Միկիչն ու Զանին հրէն կտերը կանգնած քեզ ճամփա են պահում։ Ինչ ես ասում. զէ խօսա է, Գիքոր ջան...

—Է՛ստի համեցէք, էստի համեցէք,—բացականչեց հիւանդը, զանազան անկապ, կցկտուր խօսքեր ասաւ ու ծիծաղում էր տաքութեան մէջ։

13.

Մի երկու օրից ետոյ Համբօն գնում էր իրենց գիւղը։

Նա թաղել էր Գիքորին ու գընում էր։ Կռան տակին տանում էր նրա շորերը, որ մայրը լաց լինի վրէն։ Շորերի զրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի բորոց գտան։ Էն էլ, երևի, քրոջ—Զանիի համար էր հաւաքել ու պահել...

Գնում էր Համբօն ու մտածում։ Շատ ժամանակ չէր անցել, որ էդ սիենոյն ճափմով քաղաք եկաւ իր Գիքորի հետ։ Ահա էստեղ էր, որ նա ասաւ.

—Ապի, ոտներս ցաւում են...

Եւ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու...

Ահա էնտեղ էր, որ ասաւ.

– Ապի, ծարաւ եմ...

Ահա էն աղբիւրն էլ, որ ջուր խմեցին...

Ամենը, ամենը կան, մենակ նա չը կայ...

Միւս օրը, երբ Համբօն անցնում էր լեռները՝ հեռում երևաց իրենց գիւղը։

Գիւղից դուրս կանգնած սպասում էին Նանը, Զանին, Միկիչը, Մօսին, իսկ փոքրիկ Դալօն մօր գրկից կանչում էր.

—Ալի, ալի, էէ Գիքոր...

Վ Ե Ր Ջ

«Ազգային գրադարան»
NL0396409

8870